



ԲՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բնապահպանության նախարարության
էլեկտրոնային շաբաթաթերթ

19/2017



«Այս ծրագրով մենք ընդլայնում ենք էներգիայի արդյունավետության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունները»

Նույնի 7-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի է ունեցել ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր - Կլիմայի կանաչ հիմնադրամ (ՄԱԶԾ-ԿԿՀ) «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի փաստաթղթի պաշտոնական ստորագրման արարողությունը:

Այս ծրագիրը Կլիմայի կանաչ հիմնադրամի կողմից ֆինանսավորված աշխարհում 10-րդ, իսկ եվրասիական տարածաշրջանում՝ առաջին ծրագիրն է: Այն մշակվել է ՀՀ բնապահպանության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և այլ շահագրգիռ նախարարությունների հետ սերտ համագործակցության արդյունքում, և

հաստատվել է ԿԿՀ-ի կողմից 20 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհային գումարով:

Ծրագրի փաստաթուղթը ստորագրել են ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուլետտոնը: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը շնորհակալություն է հայտնել ծրագրին մասնակից բոլոր գործընկերներին, Կանաչ կլիմայի հիմնադրամին, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրին դրամաշնորհային այս աննախադեպ ծրագրի մեկնարկի համար:

շարունակությունը էջ 2 /

• «Այս ծրագրով մենք ընդլայնում ենք էներգիայի արդյունավետության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունները»

Սկիզբը էջ 1 /

«Մեկնարկը այս կարևոր ծրագրի և մեր պատասխանատվությունը իբրև առաջնորդող գերատեսչություն լիարժեքորեն հնարավորություն է տալիս մեզ հետագայում շարունակականության մեջ դիտելու այս ծրագիրը և նմանատիպ ծրագրերը ուղղված շրջակա միջավայրի պահպանությանը՝ ապահովելով նաև սոցիալական, տնտեսական լավագույն ձեռքբերումներ: Կարևորում ենք, որ Կանաչ կլիմայի հիմնադրամի ռեսուրսները ուղղում ենք մեր տնտեսության սոցիալական կյանքի կարևորագույն ոլորտ, այն, ինչը ՀՀ ներկա կառավարությունը վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ համարում է առաջնահերթ ուղղություններից մեկը», - ասել է բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, նշելով, որ հանրապետության նախագահի հանձնարարականն է նաև, որ դրամաշնորհային ծրագրերը այնքան մեծ ուշադրության առարկա դառնան, որպեսզի թափանցիկությունը, արդյունավետությունը լինի մեզ համար ուղենիշ և հանրությունը ամբողջությամբ պատկերացում ունենա յուրաքանչյուր ծրագրի արդյունքներին հասնելու գործընթացի մասին՝ դառնալով որոշումների կայացման գործում մասնակից: Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուզետտոն, իր հերթին, կարևորել է էներգախնայողությանն ուղղված ծրագիրը: «Այս ծրագրով մենք պատասխանում ենք այն հարցին, թե ինչու և ինչպես ընդլայնել

Հայաստանի քաղաքային համայնքներում էներգիայի արդյունավետության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունները, ներառյալ այն ծրագրերն, որոնք արդեն ընթացքի մեջ են և իրականացվում են մեր ազգային գործընկերների հետ համագործակցության միջոցով: Մենք նաև գրանցում ենք ևս մեկ քայլ առաջ՝ ապահովելով ավելի խորը համագործակցություն քաղաքապետարանների հետ, որն ուղղված է «Կայուն էներգետիկա բոլորի համար» ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարության նախաձեռնության իրականացմանը և հանդիսանում է երկրի կայուն զարգացման կարևոր հենարան: Սերտորեն համագործակցելով ՀՀ կառավարության և ՀՀ բնապահպանության նախարարության հետ՝ այս ծրագիրը կնպաստի բնակչության բարեկեցությանը, էներգետիկ աղբատության նվազեցմանը, որն ազդում է բնակչության համարյա 30% վրա, միևնույն ժամանակ, կնպաստի Հայաստանի էներգետիկ անկախությանը և կապահովի Փարիզյան համաձայնագրի միջազգային պարտավորությունների համապատասխանելիությունը», - իր խոսքում նշել է Բրեդլի Բուզետտոն: Արարողությանը ներկա էին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանը, ինչպես նաև՝ շահագրգիռ նախարարությունների և գործակալությունների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ուշագրավ տեղեկություններ «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի մասին



«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցումն ծրագիրը համապատասխանում է ռեսուրսների խնայողության և Հայաստանի տնտեսական և էներգետիկ ան-

կախության ամրապնդմանն ուղղված ազգային գերակայություններին: Ծրագրի հիմնական նպատակն է նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները Հայաստանում գոյություն ունեցող շենքերի ֆոնդից՝ ապահովելով կայուն զարգացում: Ծրագիրն ուղղվելու է ինչպես հասարակական, այնպես էլ բնակելի շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանը՝ ապահովելով առավել խոցելի տնային տնտեսությունների համար ծախսերի մատչելիություն, ինչպես նաև ստեղծելով բարենպաստ շուկայական միջավայր ներդրումների և մեծամասշտաբ բիզնես մոդելի ստեղծման համար: Հարկ է նշել, որ Հայաստանում բնակիչների 30 տոկոսը համարվում է «էներգետիկ աղբատ», երբ ընտանեկան բյուջեի 10 տոկոսից ավելին ծախսվում է էներգակիրների վրա: Միևնույն ժամանակ ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների 24 տոկոսն առաջանում է շենքերում սպառվող էներգիայից:

շարունակությունը էջ 3 /

• Ուժագրավ սեղեկություններ «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի մասին

Սկիզբը էջ 2 /

Ծրագրի շրջանակներում շենքերում ջերմամեկուսացման միջոցով նախատեսվում է ապահովել շուրջ 50-60 տոկոս էներգախնայողություն և, հետևաբար, բյուջեի տնտեսում, իսկ ներդրումները շուրջ 20 տարվա ընթացքում կհանգեցնեն արտանետումների 5,1-ից մինչև 5,4 մլն տոննա ածխաթթու գազի (CO₂) կրճատմանը: Ի լրումն ԿԿԴ-ի կողմից ֆինանսավորմանը, ծրագիրը կխթանի նաև մասնավոր և հանրային հատվածի կողմից մոտավորապես 110 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորումը: Ծրագիրը հենվում է ՄԱԶԾ-ի փորձի վրա, ներգրավելու մասնավոր հատվածին, տեղական ինքնակառավարման մարմիններին, այլ դոնորների ջերմամատակարարման, շենքերի նախագծման և կառուցման, լուսավորության

ուղորտներում էներգաարդյունավետության խոչընդոտները հաղթահարման միջոցառումներին: Էներգաարդյունավետ արդիականացման համար մատչելի վարկային ռեսուրսներ ներգրավելու համար ՄԱԶԾ-ն բանակցում է եվրոպական ներդրումային բանկի, Վերականգնման վարկերի բանկի (KfW), Ֆրանսիական զարգացման գործակալության և այլ տեղական և միջազգային ֆինանսական կառույցների հետ: Ծրագիրն իրականացվելու է ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ, սերտ համագործակցելով Երևանի քաղաքապետարանի, այլ քաղաքապետարանների և այլ միջազգային ու տեղական գործընկերների հետ: Ծրագրի տևողությունն է վեց տարի:

ՀՀ ԱԺ-ում ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարության բյուջեի կատարողականը



«Աժ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության ու ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում քննարկվել է 2016 թ. ՀՀ բնապահպանության նախարարությանը հատկացված միջոցների ծախսերի կատարողականը:



«Նույնիս 3-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար Արգո Ավակովի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի /UNDP/ հայաստանյան գրասենյակի մշտական ներկայացուցչի տեղակալ Դմիտրի Մարիյասինի և ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի համակարգող Արմեն Մարտիրոսյանի հետ: Հանդիպման առանցքում ԵԱՀԿ-ի հետ համագործակցության հիմնական ուղղությունների վերաբերյալ հարցերի քննարկումն էր: Նախարարը կարևորել է բնապահպանական ոլորտում ԵԱՀԿ-ի հետ համատեղ իրականացվող ծրագրերը, նշել, որ չնայած, կառույցի Երևանյան գրասենյակի փակմանը, ակտիվությամբ և հետեւողականորեն շարունակելու են դրանց իրագործումը: Նա նշել է ծրագրերի ինստիտուցիոնալացման և գործողությունները ճանապարհային քարտեզի վերածման անհրաժեշտությունը, ինչը

Համագործակցությունը կշարունակվի նաև ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի փակումից հետո

կտա տեսանելի արդյունքներ: Արգո Ավակովը շնորհակալություն է հայտնել հանդիպման համար, ներկայացրել նախատեսվող փոփոխություններից հետո փոխգործակցության հնարավորությունները, կարևորել դրանցում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի դերը: Դմիտրի Մարիյասինն, իր հերթին, անդրադարձել է ՀՀ բնապահպանության նախարարության հետ հաջող համագործակցությանը, վստահեցրել, որ կան լավ հեռանկարներ դրա ընդլայնման համար: Հանդիպմանը խոսվել է գերատեսչության կարողությունների զարգացման անհրաժեշտության, տեխնիկական հագեցվածության և մի շարք այլ հարցերի մասին, որոնց մանրամասները կքննարկվեն արդեն աշխատանքային հանդիպումների ընթացքում: Ավարտին կողմերը ևս մեկ անգամ վերահաստատել են համագործակցության ընդլայնման և համատեղ աշխատանքին միտված պատրաստակամությունը:

«Դժվարությամբ եմ լքում Հայաստանը...» Անդրեաս Վայցելին

ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում Հայաստանում իր առաքելությունն ավարտող KfW գերմանական բանկի բնապահպանական ծրագրերի նախկին ղեկավար Անդրեաս Վայցելինի և ծրագրի ղեկավարումն ստանձնած Ալվարո Բեռնիելիի հետ: Հանդիպման մեկնարկին նախարար Արծվիկ Մինասյանը և Անդրեաս Վայցելը ստորագրել են ««Շիկահող» պետական արգելոցի հարակից 4 համայնքների էներգետիկ անվտանգության ապահովման ծրագրի փաստաթուղթը»: Այն իրականացվելու է KfW բանկի կողմից տրամադրված 8.25 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհային միջոցներով Հայաստանի կենսաբազմազանության պահպանության և պահպանվող տարածքների աջակցության ծրագրերի շրջանակներում: Նախարարը բնապահպանության բնագավառում նշանակալի աջակցություն ցուցաբերելու համար Վերականգնման վարկերի բանկի Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի էներգիայի և բնական ռեսուրսների ծրագրերի ավագ կառավարիչ Անդրեաս Վայցելին շնորհել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Բնապահպանության բնագավառում նշանակալի ավանդի համար» գերատեսչական ոսկե մեդալ: Շնորհակալություն հայտնելով Անդրեաս Վայցելին Հայաստանում ծավալած արդյունավետ գործունեության համար, նա նշել է, որ նրա անձնական ներդրման շնորհիվ ծրագրերի մեկնարկի այնպիսի հիմքեր է ձևավորել, որոնք միանշանակ ապահովելու են դրական արդյունքներ: Արծվիկ Մինասյանը նաև ողջունել է ծրագրի ղեկավարումն ստանձնած Ալվարո Բեռնիելիին՝ վստահություն հայտնելով, որ համա-



տեղ աշխատանքները ոչ միայն արդյունավետ, այլև օրինակելի կլինեն շատերի համար: Անդրեաս Վայցելը նշել է, որ դժվարությամբ է լքում Հայաստանն այն ժամանակահատվածում, երբ պահպանվող տարածքների ոլորտում մեկնարկել է արդյունավետ համագործակցության կարևոր փուլ և հաջողություն մաղթել ծրագրի նորանշանակ ղեկավար Ալվարո Բեռնիելին: Կողմերը քննարկել են Հայաստանի կենսաբազմազանության պահպանության և պահպանվող տարածքների աջակցության ծրագրի կառուցվածքին և բովանդակությանը վերաբերող հարցեր: Բնապահպանության նախարարը կարևորել է ծրագրի լիարժեք իրականացումը, քանի որ այն լինելով շարունակական, ՀՀ կառավարության առաջնահերթ ծրագրերից է: Արծվիկ Մինասյանը հատկապես առանձնացրել է ծրագրի սոցիալական բաղադրիչը, հավաստիացնելով, որ բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից համայնքների զարգացումն ուղղակի իր դրական ազդեցությունը կունենա պահպանվող տարածքների պահպանման ռեժիմի բարելավման և զարգացման վրա: Քննարկման արդյունքում կողմերը պայմանավորվածություններ են ձեռք բերել հետագա համատեղ քայլերի և դրանց իրականացման ուղիների վերաբերյալ:

Հատուկ պահպանվող տարածքների կառավարման նախագիծն արժանացել է հավանության

Նույնիսի 4-ին ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալությունում տեղի է ունեցել գործակալության նախաձեռնությամբ կազմակերպված քննարկում բնության հատուկ պահպանվող տարածքները կառավարող ՊՈԱԿ-ների տնօրենների և գործակալության աշխատակիցների մասնակցությամբ: ՊՈԱԿ-ների տնօրենների քննարկմանն է ներկայացվել բնության հատուկ պահ-



պանվող տարածքների կառավարման արդյունավետությանն ուղղված ծրագրի նախագիծը, որն արժանացել է հավանության: Կողմերի քննարկման ընթացքում հնչեցվել են առաջարկություններ նախագծի լրամշակման վերաբերյալ և պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել շարունակական արտագնա հանդիպումներ հատուկ պահպանվող տարածքներում:

Մշակվում է նոր կառույցի հայեցակարգը

Ուսումնական կենտրոնի մշակման աշխատանքները և այն մինչև նախաձեռնված ժամկետը՝ սեպտեմբերի 15-ը, նախատեսվում են ավարտել: Նախարարին ներկայացվել են կենտրոնի տեխնիկական և մասնագիտական կարողությունները: Արծվիկ Մինասյանը կարևորել է ՊՈԱԿ-ի գործունեությունը, նշել, որ մոնիտորինգային միասնական համակարգի արդյունավետ աշխատանքը նախարարության կարևոր գործառնություններից է: Նախարարը հատկանշել է ձեռնարկատիրական գործառնությունների ընդլայնման անհրաժեշտությունը, կադրային ճիշտ քաղաքականության իրականացումը, որը կենտրոնի գործառնությունների արդյունավետ իրականացման երաշխիք կարող է լինել: «Մեզ պետք է որակյալ կառույց ստեղծել, պարտավորված չենք միավորված ՊՈԱԿ-ների աշխատակիցներին ժառանգաբար տեղափոխել նոր կենտրոն: Ամենայն պատասխանատվությամբ ասում եմ՝ մասնագիտական կարողություններին չբավարարող ցանկացած կադրի մասով կաշկանդվածություն մի ունեցեք, որովհետև չաշխատող, անարդյունավետ աշխատող անձի բացասական արդյունքը վերագրվում է ձեզ, վերաբերում է կազմակերպությանը, նախարարությանը, հետևաբար, շատ ակտիվ կադրային քաղաքականություն պետք է վարեք: Մի կաշկանդվեք, միաձուլման արդյունքում ժառանգաբար փոխանցված համակարգ է սա, նոր երիտասարդ կադրեր բերեք, որոնք կարող են հին կադրերին զուգահեռաբար աշխատել, փորձ ձեռք բերել», - մասնավորապես ասել է նախարարը տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին: Քննարկվել են նաև ոլորտին առնչվող մի շարք հարցեր: Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը, նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանը, ՀՄՍՏԿ ՊՈԱԿ-ի ղեկավար կազմը:



Օրերս ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանն այցելել է ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ: Կառավարության որոշմամբ՝ «Թափոնների ուսումնասիրության կենտրոն», «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն», «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» և «Տեղեկատվական-վերլուծական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպել են՝ ստեղծելով «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն»/ ՀՄՍՏԿ/ պետական ոչ առևտրային կազմակերպություն: Կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սիմոն Պապյանը նախարարին ներկայացրել է ՊՈԱԿ-ի գործառնությունները, անդրադարձել խնդիրների, որոնց լուծմամբ է նաև պայմանավորված կենտրոնի արդյունավետ աշխատանքը: Նախարարի հունիսի 27-ի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ «Շրջակա միջավայրի պետական մոնիտորինգի հայեցակարգ» մշակելու նպատակով: Աշխատանքային խմբի ղեկավար, ՀՄՍՏԿ ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սիմոն Պապյանը նախարարին հայտնել է, որ արդեն մեկնարկել են հայեցակարգի

նացումը, որը կենտրոնի գործառնությունների արդյունավետ իրականացման երաշխիք կարող է լինել: «Մեզ պետք է որակյալ կառույց ստեղծել, պարտավորված չենք միավորված ՊՈԱԿ-ների աշխատակիցներին ժառանգաբար տեղափոխել նոր կենտրոն: Ամենայն պատասխանատվությամբ ասում եմ՝ մասնագիտական կարողություններին չբավարարող ցանկացած կադրի մասով կաշկանդվածություն մի ունեցեք, որովհետև չաշխատող, անարդյունավետ աշխատող անձի բացասական արդյունքը վերագրվում է ձեզ, վերաբերում է կազմակերպությանը, նախարարությանը, հետևաբար, շատ ակտիվ կադրային քաղաքականություն պետք է վարեք: Մի կաշկանդվեք, միաձուլման արդյունքում ժառանգաբար փոխանցված համակարգ է սա, նոր երիտասարդ կադրեր բերեք, որոնք կարող են հին կադրերին զուգահեռաբար աշխատել, փորձ ձեռք բերել», - մասնավորապես ասել է նախարարը տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին: Քննարկվել են նաև ոլորտին առնչվող մի շարք հարցեր: Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը, նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանը, ՀՄՍՏԿ ՊՈԱԿ-ի ղեկավար կազմը:

ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0,6 մլն. դրամ գումար

Բնապահպանական պետական տեսչության կողմից 03.07.-07.07.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, տեսչության վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 830,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 12 որոշում և հաշվարկվել 417,9 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մասնավորապես՝ Բուսական աշխարհի պահպանության ոլորտ Կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում 100 հազ. դրամի և հաշվարկվել է 337,5 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնաս, որից՝ Լոռու տարածքային բաժինը ՀՀ ոստիկանության ԼՄՎ Թունանյանի բաժնից ստացված արձանագրության հիման վրա /հատվել է 1 հաճարենի/ իրավախախտի նկատմամբ կայացրել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկել է 202,5 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցրած վնաս: Երևանի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում 1 իրավախախտի նկատմամբ կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 135,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Ապօրինի որսի իրականացման համար Կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում՝ 100,0 հազ. դրամ գումարով, առգրավվել է 1,9 կգ խեցգետին, 4 հատ խեցգետնաորսիչ: Որից՝ Շիրակի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հայտնաբերվել է խեցգետնի ապօրինի որսի մեկ դեպք: Կայացվել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի 1 որոշում, առգրավվել է 4 հատ խեցգետնաորսիչ, իսկ 1,9 կգ խեցգետինը կենդանի վիճակում բաց է թողնվել ջրամբար: Արարատի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործով՝ /հայտնաբերվել է արջի քոթոթ և կապիկ/ կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում: Փայտանյութի ապօրինի տեղափոխում Կազմվել է վարչական տուգանքի 5 որոշում՝ 500,0 հազ. դրամ գումարով և հաշվարկվել է 72,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝ Գեղարքունիքի տարածքային բաժնի աշխատակիցների վերահսկողական աշխատանքների ընթացքում արձանագրված դեպքի համար իրավախախտի նկատմամբ կայացվել է 100,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 72,0 հազ. դրամ գումարի շրջա-



կա միջավայրին հասցված վնաս: Տավուշի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված վառելափայտի ապօրինի տեղափոխման 4 դեպքի համար կայացվել է 400,0 հազ. դրամ ընդհանուր գումարի 4 որոշում: Ապօրինի արածեցման համար Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 50,0 հազ. դրամ գումարով և հաշվարկվել է 8,4 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս, որն է՝ Գեղարքունիքի տարածքային բաժինը «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ից ստացված 27 գլուխ խոշոր և 20 գլուխ մանր եղջերավոր անասունների ապօրինի արածեցման փաստի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա նշանակել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկել է 8,4 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մթնոլորտի պահպանության ոլորտ՝ Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 50,0 հազ. դրամի, որն է՝ Կոտայքի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված ապօրինի շինարարական աղբի տեղափոխման և տեղադրման դեպքի համար մեկ ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում: Հողերի պահպանության ոլորտ Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 30,0 հազ. դրամի, որն է՝ Շիրակի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հողի բերրի շերտի տեղափոխման համար ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 30,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում: Վարչարարության և փորձաքննության բաժինը հաշվետու ժամանակաշրջանում դատական ակտերի հարկադիր կատարման է ներկայացրել 2 վարչական տուգանքի որոշում՝ 100,0 հազ. դրամի չափով և վնասի փոխհատուցման 1 որոշում՝ 56,25 հազ. դրամի չափով: Ընդհանուր առմամբ Բնապահպանական պետական տեսչության կիրառված պատժամիջոցներից նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0,6 մլն. դրամ գումար:

Ապօրինի ծառահատման նոր դեպքեր, ի՞նչ կպարզի ոստիկանությունը

Նախարարության «Դիլիջան» ազգային պարկի աշխատակիցների և ՀՀ ոստիկանության Տավուշի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից ձեռնարկած համատեղ միջոցառումների շնորհիվ ազգային պարկի Հաղարծին տեղամասի 7-րդ պահաբաժնի «Քյուլոզի ձոր» կղզվող հանդամասում հայտնաբերվել են թվով 14 կաղնի և 3 բոխի տեսակի տարբեր տրամագծի հատված ծառերի կոճղեր, մոտ 2 խ.մ. կաղնի տեսակի փայտանյութ և 5 կաղնու հատված ծառ: Պարկի Հաղարծին տեղամասի 7-րդ պահաբաժնի տեսուչ Մարինե Պետրոսյանը հայտնել է, որ ս.թ հունիսի 5-ի ժամը 17-00 սահմաններում նկատել է Ա. Թամանյանին և Ա. Պողոսյանին, ովքեր բենզադիզել փայտանյութ են մանրացրել: Հայտնաբերված փայտանյութն ի պահ է հանձնվել Հաղարծին տեղամասի անտառապահին: Փաստի վերաբերյալ ոստիկանությունում նշանակվել է մասնագիտական ստուգում:



Պահպանելով լճի էկոլոգիական հավասարակշռությունը Սեւանը դարձնելու ենք մեծ գրավչություն ունեցող հանգստավայր



Հունիսի 1-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի հարակից հանրային թիվ 1 լողափում տեղի է ունեցել Սևանա լճում լողաշրջանի բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը, Սևանի քաղաքապետ Սարգիս Մուրադյանը, Հայաստանում դիվանագիտական ներկայացուցչությունների պատասխանա-

տուներ, ՀՀ քաղաքացիներ: Միջոցառման մշակութային մասն ապահովել էին Սևան քաղաքի մշակույթի տան ստեղծագործական խմբերի սաները: Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը ներկաներին շնորհավորել է լողաշրջանի բացման կապակցությամբ և մաղթել ակտիվ և անվտանգ հանգիստ: «Սևանը լինելով համաժողովրդական սեփականություն և ազգային հարստություն՝ պետք է հավասարապես հասանելի լինի մեր յուրաքանչյուր քաղաքացուն: Այս նպատակով էլ ՀՀ Նախագահի հանձնարարականով 2011 թվականից մեկնարկեց Սևանա լճի ափամերձ տարածքներում հանրային լողափերի ձևավորման աշխատանքները, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի հնարավորություն ունենա մասնավոր հանգստանալ Սևանա լճի լողափերում: Առանձնահատուկ կարևորում են մասն ՀՀ վարչապետի վերջին հանձնարարականները՝ Սևանի զարգացման ծրագրերն առաջ մղելու ուղղությամբ: Կառավարությունն ամեն ինչ անելու է, որ Սևանն, իր էկոլոգիական հավասարակշռությանը համապատասխան, դառնա տարածաշրջանում գրավչություն ունեցող, ժամանակակից, կայուն զարգացմանը համապատասխանող վայր», - նշել է Ա. Մինասյանը և կոչ արել բոլորին մասնակցել այդ գործընթացին: Տեղեկացնելով, որ այդ նպատակների համար ակն-



կալվում են խոշոր ներդրումներ՝ բնապահպանության նախարարը վստահեցրել է, որ ՀՀ կառավարությունն անելու է առավելագույնը, որպեսզի Սևանում իրականացվող որևէ զործողություն չվնասի լճի էկոհամակարգին, ապահովվի բնապահպանական, սոցիալական և տնտեսական շահերի համադրում և քաղաքացիների հանգստի կազմակերպումը լինի լիարժեք: ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթյանը, ողջունելով ներկաներին, նշել է, որ նպատակադրված են Բնապահպանության նախարարության հետ հետևողականորեն ավելացնել հանրային լողափերի թիվը: Սևանի քաղաքապետ Սարգիս Մուրադյանն էլ իր ելույթում քաղաքացիներին հորդորել է ամառային տապից պաշտպանվել Սևանի լողափերում: Հանդիսավոր բացման արարողությունը շարունակվել է ավանդական երգ ու պարով: Նախարարը շրջայց է կատարել Սևանա լճի առափնյա հատվածներում, ծանոթացել Ծովագյուղ համայնքին հարակից ամենամեծ՝ թիվ 8 հանրային լողափի /9 հեկտար տարածք/ ստեղծման նախագծային աշխատանքներին: Արծվիկ Մինասյանը եղել է նաև թույլատրելի միջից ներքև կառուցված և ներկայումս Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով ջրածածկ եղած շինությունների և ենթակառուցվածքների գտնվելու վայրերում, տեղերում քննարկել խնդիրները և տվել համապատասխան ցուցումներ նախարարության և «Սևան» ազգային պարկի պատասխանատուներին: Իսկ Բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը և «Ստորջրյա հետազոտությունների և սուզումների հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության փոխնախագահ Արա Ավագյանը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր՝ գերատեսչության և հասարակական կազմակերպության համագործակցության մասին: Արծվիկ Մինասյանը շրջայց է կատարել նաև հանրային լողափերում, ծանոթացել բուժկետերի և ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տարբեր օղակների աշխատանքներին:



Տեղեկանք

Համաձայն ՀՀ կառավարության 28.04.2011 թ.-ի N 527-Ն, 07.06.2012 թ.-ի N 752-Ն և 01.10.2015 թ.-ի N 1122-Ն որոշումների՝ «Սևան» ազգային պարկի տարածքում ստեղծվել է 8/ուժ/ հանրային լողափ, ընդհանուր 28,16 հա մակերեսով, որից.

- N 1 հանրային լողափ - 1,39 հա (Սևան համայնք)
- N 2 հանրային լողափ - 1,82 հա (Սևան համայնք)
- N 3 հանրային լողափ - 5,5 հա (Սևան համայնք)
- N 4 հանրային լողափ - 5,0 հա (Դրախտիկ համայնք)
- N 5 հանրային լողափ - 1,37 հա (Լճաշեն համայնք)
- N 6 հանրային լողափ - 3,3 հա (Ծովագարդ համայնք)
- N 7 հանրային լողափ - 0,78 հա (Նորատուս համայնք)
- N 8 հանրային լողափ - 9,0 հա (Ծովագյուղ համայնք)

8 հանրային լողափերից կահավորված են N1, N2 և N3-ը, N8-ի համար կազմվել են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով դեռ չի կահավորվել, իսկ մնացած 4-ը՝ ընհանրապես կահավորված չեն և նախատեսված են կարծատև հանգստի համար:

N1, N2 և N3 հանրային լողափերը կահավորված են լողափնյա հանգստի բոլոր անհրաժեշտ պարագաներով՝ տապալաններ, հովանոցներ, սանհանգույցներ, խաղահրապարակներ, ավտոկայանտեղիներ, հանդերձարաններ, նստարաններ, բուժկետեր, փրկարարական կետեր:

Հանրային լողափերում տարեկան հանգստանում է միջինը 250-ից 300 հազար մարդ:

Նախագիծը՝ Արծուն Դեղանյանի
 Խմբագիր՝ Սանվել Սկրչյան
 Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
 Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
 011 818 517